ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական թեմա՝ ---

Ներառական կրթության առանձնահատկությունները ՀՀ-ում

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Դանիելյա

Դպրոց ---------- Արմավիրի թիվ 4 ավագ

Մենթոր՝ Նատալյա Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ-2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

❖ Ներածություն ----------2

✓ Գլուխ 1. Մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման դպրոցական մակարդակ---------- 5

✓ Գլուխ 2. ՈՒսուցիչների վերապատրաստումներ և հետադարձ կապի մեխանիզմներ----------16

✓ Գլուխ 3. Ներառական կրթությունը և ծնողական համայնքը--18

❖ Եզրակացություններ----------21

Առաջարկություններ

❖ Օգտագործված գրականություն ցանկ-----22

❖ Հավելված----------23

Հապավումների ցանկ

ԱՈՒՊ Անհատական ուսումնական պլան

ՆԴ Ներառական դպրոց

ՆԿ Ներառական կրթություն

ԿԶՆԱԿ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն

ԿԱՊԿՈՒ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ԿԱՊԿԳ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մեր սերնդի գերագույն հայտնագործությունն այն էր, որ մարդ էակը, փոխելով իր մտքի ուղղվածությունը, կարող է փոխել իր կյանքը»: Ուիլյամ Ջեյմս

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքների արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կատարման արդյունքում ԿԱՊԿՈՒ երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն են ստանում երեք մակարդակում՝ Հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը[1]:

2003 թ.-ին Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումներն ուղղված էին նոր մոտեցումների ներդրմանն ու որակյալ կրթության խթանմանը, հատկապես դասարանում ուսումնական միջավայրը փոխելու և աշակերտակենտրոն մոտեցումների, մասնավորապես՝ համագործակցային ուսումնառության ներդրման միջոցով (Duda & Clifford-Amos, 2011):

[1] Ներառական կրթության ռազմավարություններ .Դասագիրք: Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: Եր. 2019թ.: 250էջ:

Այսօր առանցքային հարցերից մեկը հանրակրթության ուսուցիչների դժվարություններն են՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին դասավանդելու և դասարանում ներառական միջավայր ստեղծելու հարցերում: Անափիոսյանը, Հայրապետյանը և Հովսեփյանը (2014) փաստում են, որ ուսուցիչների 90%-ը չի տիրապետում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսումնական գործընթացում արդյունավետորեն ներառելու մեթոդներին:

Ըստ Villa, Thousand & Nevin-Ç (2013) ներառումն ավելի խորը իմաստ ունի, քան հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներկայության խրախուսումը: Մանկավարժները պետք է լինեն գորովալից և մեծ ակնկալիքներ ունենան բոլոր սովորողներից: Դպրոցները պետք է ակնկալեն առաջընթաց բոլոր սովորողներից:

Էդիբըրնը /2014/ ընտանիքները որոշիչ դեր ունեն ներառական կրթության գործընթացում: Նրանք ականատեսն են երեխայի տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց փոխադրմանը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը (Ferrel, 2012; Núñez, Suárez, Rosário; Vallejo, Valle & Epstein, 2015):

Friend & Cook (2010) Ընտանիքների դերի փոփոխությունը՝ պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից դեպի ակտիվ մասնակցողի, վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է:

Հետազոտության օբյեկտ- Մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման դպրոցական մակարդակի մասնակիցներ

Հետազոտության նպատակը- Հետազոտել և բարելավել մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման դպրոցական մակարդակի մասնակիցների աշխատանքը, հատկապես՝ ուսուցչի:

<u>Հետազոտության խնդիրները-</u>

- Մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման դպրոցական մակարդակի ծառայության աշխատանքի էությունը, մասնակիցները:
- ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և բազմամասնագիտական թիմի միջև թույլ համագործակցային հարաբերությունները:
- ՈՒսուցիչների ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու գլխավոր խնդիրներները:

Հետազոտության գործնական համատեքստ

Սույն հետազոտությունն իրականացվել է զրույցի և դիտման մեթոդների համադրմամբ:Կատարել եմ լուսանկարահանումներ: Իբրև ոլորտային զարգացումների իրավիճակի նկարագրում՝ իրականացվել է նաև համապատասխան օրենսդրական փաստաթղթերի և ակտերի, միջազգային հռչակագրերի և պարտավորությունների փաստաթղթերի վերլուծություն: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հետազոտության թիրախային խմբերը, յուրաքանչյուրի կարծիքի ուսումնասիրման մեթոդը և ընտրանքային ծավալները:

Հետազոտության մեթոդ	Թիրախային խումբ	Ընտրանքային ծավալը
Ֆոկուս- խմբային քննարկումներ, հարցաթերթիկներ	Ծնողներ	35
Դիտում, հարցազրույց	Բազմամասնագիտական թիմի անդամներ	5
Փաստաթղթերի վերլուծություն	1. Սալամանկայի հռչակագիր և	

	գործողությունների շրջանակ 2. Երեխաների իրավունքների հռչակագիր 3. Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիր 4. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին 5. Ներառական կրթության պետական ծրագիր 6. Հանրակրթության օրենքում փոփոխություն կատարելու օրենքի նախագիծ 7. ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. Պետական ծրագիր	
Հարցազրույցներ	Առարկայական ուսուցիչներ	30

Իմ աշխատանքային փորձից նշեմ, որ ունեցել եմ աշակերտ, որն ունեցել է ինտելեկտուալ /մտավոր/ ֆունկցիաների միջին խանգարում: Նա խնդիրներ ուներ հետևյալ ոլորտներում՝ սովորել և գիտելիքը կիրառել, ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ կատարել , հաղորդակցում, միջանձնային շփում և հարաբերություններ հաստատել, ուշադրությունը կենտրոնացնել առաջադրանքների կատարման վրա: Սակայն ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում օգնությամբ կարողանում էր կատարել պարզ-առօրյա տրամաբանական խնդիրներ պահանջող առաջադրանքներ, շփվել միայն մի քանի դասընկերների հետ, ուշադրությունը

կենտրոնացնել հանձնարարված առաջադրանքի վրա / կարճ պատմվածքներ, խաղ-վարժանքներ, զրույց/ միայն 10-ից 15ր. տևողությամբ/, շտկողական աշխատանքների շնորհիվ սովորել կարճ, մատչելի նյութեր, բայցգործնական կիրառումը դեռևս դժվարանում է: Եթե համեմատենք այս տարվա և նախորդ տարվա հետ, փոփոխությունները ակնհայտ առկա են: Համեմատական կարգով ավելի հավասարակշռված է, կարողանում է հրահանգներ կատարել, անգիր սովորել և պատմել կարճ պամություններ: Սիրում է շփվել դասընկերների հետ, իսկ այս տարի արդեն կողքի դասարանի աշակերտների շրջանակում ընկերներ ունի:;

Բայց մանկավարժահոգեբանական աջակցությունը անհրաժեշտ է շարունակել:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում ԿԱՊԿՈՒ և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա:Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության , մոտեցումների,կառույցների և մեթոդական համակարգի մեջ տարածվում է համապատասխան տարիքային խմբերի բոլոր երեխաների վրա:

Հայաստանում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման համատեքստում տրամադրվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ:

Ինչպես սահմանում է ՝Հայաստանի Հանրապետության մասին՝ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 10.4-րդ կետը, ՝մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, երեխայի կրթության արդյունավետ կազմակերպման համար, սովորող երեխայի, նրա ծնողն կամ օրինական ներկայացուցչին, նրա ուսուցիչներին ու նրա հետ աշխատողայլ մասնագետներին տրամադրող ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցությունն է՝

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն են կազմում նաև միջավայրային հարմարեցումներ՝ թեքահարթակնեի կառուցում, դռների լայնացում, տեխնիկայի կամ տեխնոլոգիաների տրամադրում, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրում կամ միջավայրի այլ ֆիզիկական հարմարեցումներ:

Երեխայի կրթության կազմակերպման՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակով՝

1. **Դպրոցական մակարդակ**՝ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից,
2. **Տարածքային մակարդակ**՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից,
3. **Հանրապետական մակարդակ**՝ հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:

Սովորողի ուսուցման կազմակերպումը հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ներառական ուսումնական հաստատություններում

Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտումն ընդգրկում է հետևյալ փուլերը՝

- դիտարկում,
- կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտում

(մանկավարժահոգեբանական հետազոտման միջոցով),

- կարողությունների գնահատում, ուսումնական գործընթացի անհատականացված պլանավորում

Առաջին փուլի նպատակն է դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերումը և դիտարկումը:

Երկրորդ փուլը ուղղված է որոշելու սովորողի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը և մանկավարժահոգեբանական աջակցության ծավալները:

Երրորդ փուլ՝ գնահատման այս փուլում անհրաժեշտ է բացահայտել երեխայի կարողությունները, կրթական ներուժը, որի հիման վրա ուսուցիչները, դպրոցի աջակցող թիմի օժանդակությամբ, կազմում են անհատական ուսուցման պլանը:

Դիտարկման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել՝

- ո՞վ է սովորողը,
- ի՞նչ հետաքրքրություններ կամ հատուկ ձիրք (ձիրքեր) ունի,
- որո՞նք են սովորողի ուժեղ կողմերը,
- ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքների առկա մակարդակը,
- որո՞նք են սովորողի ամենամեծ դժվարություններն ու կարիքները,

- ովքե՞ր են սովորողի ընկերները,
- ո՞վ և ի՞նչ դեր ունի սովորողի կենսագործունեության ասպարեզում,
- ի՞նչ է անհրաժեշտ սովորողին դասարանում, տանը, շրջապատում՝ հետագա զարգացման և անկախ լինելու համար:

Դպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով

Եթե երեխայի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով, դպրոցը, ծնողի համաձայնության առկայությամբ, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կերտրոն է ներկայացնում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի 2-րդ մակարդակի գնահատնան դիմումը՝ կից փաստաթղթերով. Երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճենները,երեխայի անձնական գործի պատճենը, երեխայի առողջական վիճակի մասին փաստաթուղթը, դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկը: Հաստատության տնօրինության կողմից դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո տարածքային կենտրոնը նշանակում է երեխայի տարածքային մակարդակի գնահտումը սկսելու օրը՝ առավելագույնը 10-օր ժամկետում, որի մասին տեղեկացնում է դպրոցի տնօրիությանը; Երեխայի տարածքային մակարդակի գնահատումն իրականացվում է որոշելու համար երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Եթե ծնողը համաձայն չէ տարածքային մանկավարժահոգեբանական կերտրոնի կողմից իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ, ապա նա կարող է բողոքարկել և իր երեխային ներկայացնել հանրապետական մանկավարժահոգեբանական կերտրոն:[2] Հանրապետական մանկավարժահոգեբանական կերտրոնը ընթացք է տալիս երեխայի ծնողի գրավոր բողոքին՝/ կապված տարածքային կենտրոնի կողմից իր երեխայի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքների հետ ունեցած իր անհամաձայնության/ այն ստանալու օրվանից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրապետական

[2] Ներառական կրթություն. ՈՒսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ.- Եր.: «Հույսի կամուրջ»ՀԿ 2015.-200 էջ:

մանկավարժահոգեբանական կերտրոնի կողմից երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատման գործընթացին չեն մասնակցում դպրոցական և տարածքային մակարդակների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնագետները և ուսուցիչները:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դպրոցական մակարդակում

1. Դպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն սովորողներին, ովքեր սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

2. Տվյալ մակարդակում ծառայությունները տրամադրվում են հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի միջոցով (այսուհետ՝ աջակցության խումբ),

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և տրամադրման գրաֆիկը մշակում է հաստատության աջակցության խումբը, հաստատվում է տնօրենի կողմից:

4. Ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է հաստատությունը՝ ի դեմս դպրոցի տնօրինության և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի:

5. Աջակցության խմբի կազմում ընդգրկվում են հաստատության ուսուցչի օգնականը(ները), հատուկ մանկավարժը(ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը: Եթե հաստատությունում չկան նշված մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոնից: Դպրոցական մակարդակում աջակցության խումբը, սերտ համագործակցելով ուսուցիչների և սովորողի ծնողների հետ, իրականացնում է դպրոցական մակարդակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու կրթության արդյունավետ կազմակերպումը:

6. Հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո.

1) առավելագույնը 15-օրյա ժամկետում, աջակցության խումբը ծնողի մասնակցությամբ, մշակում է սովորողի Անհատական ուսուցման պլան (այսուհետ՝ ԱՈՒՊ): ԱՈՒՊ-ում ներառված աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները որոշվում են սովորողի դպրոցական կամ տարածքային մակարդակների Գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա ,

2) սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակացույցը հաստատում է տնօրենը և պատճենը տրամադրում սովորողի ծնողին:

7. Աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:

8. Աջակցության խումբը դասաժամերի ընթացքում անցկացնում է դիտարկումներ (առնվազն 3 դասաժամ մեկ օրվա ընթացքում), կատարում է ուսումնական նյութերի հարմարեցումներ, մշակում է հաջորդ օրվա դասի պլանների վերաբերյալ առաջարկություններ՝ կապված մանկավարժական մեթոդների և առաջադրանքների հետ, իրականացնում է սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աջակցության ծառայությունների տրամադրման այլ աշխատանքներ:

9. Յուրաքանչյուր օրվա ավարտին աջակցության խումբը ԱՈՒՊ-ի համապատասխան բաժիններում գրառում է իրականացված աշխատանքները:

10. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի անդամների ժողով՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ աջակցող ծառայությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում ժողովին կարող են հրավիրվել սովորողի ծնողն ու Տարածքային կենտրոնի մասնագետները:

11. Սովորողի ԱՈԻՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեսքով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին:

12. Սովորողի կրթական առաջընթացի ընթացիկ գնահատումը կատարվում է ԱՈԻՊ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան:

13. Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, վերանայվում են ԱՈԻՊ-ով սահմանված խնդիրները և գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները:

Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ

Սովորողի անուն, հայրանուն, ազգանուն

_____

Ծննդյան օր, ամիս, տարի _____ **ծննդյան վկայական** N _____

Ուսումնական հաստատության անվանումը՝ _____**Դասարան՝** _____

Լրացման ամսաթիվ՝_____

«X»-ով նշե՛ք «**Երեխայի գործունեության գնահատման գործիք»**-ի արդյունքները.

	Բաժիններ	Լիակատար ինքնուրույնություն	Ցնավորվող ինքնուրույնություն	Հսկողություն	Թեթև աջակցություն	Միջին աջակցություն	Մեծ հաճախակականությամբ աջակցություն	Ամբողջական կամ մշտական աջակցություն
1	*Ընդունել հրահանգները և հետևել դրանց*							
2	*Հարմարվելու կարողություն*							
3	*Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն*							
4	*Փոխհարաբերությունները հասակակիցների հետ*							
5	*Ինքնասպասարկում*							
6	*Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում*							
7	*Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում*							
8	*Ուշադրություն*							
9	*Հիշողություն*							

10	*Հաղորդակցում*							
11	*Ընտրություն կատարելու կարողություն*							
12	*Կուլ տալու կարողություն*							
13	*Կարդալու կարողություն*							
14	*Գրելու կարողություն*							
15	*Խոսելու կարողություն*							
16	*Մեքենայով փոխադրվել*							
17	*Համայնքի մատչելիություն*							
18	*Վարքի կառավարում*							
19	*Կողմնորոշում*							
20	*Ապահովության դատողություն*							

Խնդրում ենք նկարագրել սովորողի կատարողականությունը, ուժեղ և թույլ կողմերը, հաշվի առնելով առաջին մակարդակի գնահատման արդյունքում ստացված տվյալները:

1. Ընթանել հրահանգները և հետևել դրանց
_____
_____
_____
_____
_____

2. Հարմարվելու կարողություն
_____
_____
_____
_____
_____

3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն
_____
_____
_____
_____
_____

4. Փոխհարաբերությունները հասակակիցների հետ
_____
_____
_____
_____
_____

5. Ինքնասպասարկում
_____
_____
_____
_____
_____

6. Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում
_____
_____

_____
_____
_____

7. Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում
_____
_____
_____
_____
_____

8. Ուշադրություն
_____
_____
_____
_____
_____

9. Հիշողություն
_____
_____
_____
_____
_____

10. Հաղորդակցում
_____
_____
_____
_____
_____

11. Ընտրություն կատարելու կարողություն
_____
_____
_____
_____
_____

12. Կուլ տալու կարողություն
_____
_____
_____
_____
_____

13. Կարդալ
_____
_____
_____
_____
_____

14. Գրել
_____
_____
_____

_____

15.Խոսքային հաղորդակցում

_____

_____

_____

_____

_____

16.Մեքենայով փոխադրվելը

_____

_____

_____

_____

_____

17. Համայնքի մատչելիություն

_____

_____

_____

_____

_____

18. Վարքի կառավարում

_____

_____

_____

_____

_____

19. Կողմնորոշում

_____

_____

_____

_____

_____

20. Ապահովության դատողություն

_____

_____

_____

_____

_____

Ստորագրություններ՝

ծնող՝ _____ _____

դասվար/ դասղեկ՝ _____ _____

ուսուցիչներ/ մասնագետներ՝ _____ _____ _____

_____ _____ _____

_____ _____ _____

պաշտոն ստորագրություն անուն, ազգանուն

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ (ԱՈՒՊ) և Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան (ՄԱԾԱՊ)

Չափորոշչային գիտելիքներ և կարողություններ

ԱՈՒՊ-ի լրացման ժամանակ անհրաժեշտ է ամբողջովին հիմնվել առարկայական չափորոշչի և ծրագրի վրա: Այստեղ կարևոր պայման է՝ հարմարեցնել չափորոշչային նվազագույն պահանջները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կարողություններին: Յուրաքանչյուր սովորող չպետք է դուրս մնա դասի թեմայից, այլ ունենա հավասար մասնակցություն՝ իր կարողություններով և հմտություն-ներով:

Չափորոշիչների կարողություններ, հմտություններ և արժեքներ, ինչպես նաև գիտելիքներ բաղադրիչների բաժինները սերտորեն կապված են միմյանց և տալիս են դասի նախապատրաստման, պլանավորման և վարելու հստակ գաղափարներ:

Առարկայական չափորոշիչները նպատակաուղղված են անհատական ուսուցման ապահովմանը: Մշակված առարկայական չափորոշիչների և ծրագրի բովանդակությունը հիմնականում հենվում է կառուցողականության մոտեցման և նրա ուսուցման ռազմավարության վրա:

ԱՈՒՊ-ում սահմանված նպատակները պետք է լինեն իրատեսական, չափելի: Որքան իրատեսական են սահմանված նպատակները, այնքան դրանց հաղթահարումը հեշտ է և հասանելի:

ՄԱԾԱՊ-ը մշակվում է այն երեխայի համար, ով ներկայացվել է առաջին/դպրոցական կամ երկրորդ տարածքայինմակարդակների գնահատման, որի արդյունքում պարզ է դարձել, որ նա ունի կրթության առանձնահատուկ պյմանների կարիք և առանց անհրաժեշտ հարմարությունների, առանց մանկավարժահոգեբանության աջակցության չի կարող հասնել կրթության իր նպատակներին:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում երեխայի համար սահմանվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության տեսակներն են՝

1. Հատուկ մանկավարժական ծառայություններ,որոնք տրամադրում են լոգոպեդի տիֆլոմանկավարժի, սուրդոմանկավարժի, օլիգոֆրենամանկավարժի կողմից
2. Հոգեբանական ծառայություններ
3. Միջավայրի հարմարեցումներ:

Ի՞նչ կազմ ունի մանկավարժահոգեբանական աջակցության խումբը

Դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության խումբը

Անմիջական մասնակիցներ	Արդյունավետության և որակի համար պատասխանատուներ
Երեխան և իր ծնողը՝ օրինական ներկայացուցիչը	• Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը
Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչները, ովքեր դասավանդում են երեխային	• Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
• Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականը • Հանրակրթական ուսումնական հաստատության բուժքույրը • Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը՝ առկայության դեպքում	• Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ
• Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը՝ առկայության դեպքում	
• Հանրակրթական ուսումնական հաստատության տարածքը սպասարկող տարածքային մանկավարժահոգեբանական	

կենտրոնի այն մասնագետները, ում կարիքը դպրոցն ունի և պաշտոնապես հրավիրել է երեխաների առաջին մակարդակի գնահատումն իրականացնելու համար	

Տարածքային մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության խումբի կազմում ընդգրկված են

Անմիջական մասնակիցներ	Արդյունավետության և որակի համար պատասխանատուներ
Երեխան և իր ծնողը՝ օրինական ներկայացուցիչը	Տարածքային մանակավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի ծառայությունների մասով տեղակալը
Տարածքային կենտրոնի առնվազն 3 մասնագետ՝ • հատուկ մանկավարժ • հոգեբան • սոցիալական մանկավարժ	Տարածքային մանակավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն
Ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խումբը	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը
Երեխայի ուսուցիչը	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
	Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական

	աջակցությունների գծով տեղակալ

Հանրապետական մակարդակում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատումն իրականացնող անկախ փորձագիտական խմբի կազմում ընդգրկված են՝

Անմիջական մասնակիցներ	Արդյունավետության և որակի համար պատասխանատուներ
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի՝ • մեկ մանկավարժ • մեկ հատուկ մանկավարժ • մեկ հոգեբան • մեկ սոցիալական մանկավարժ • մեկ բուժաշխատող	Հանրապետական մանակավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենը
Երեխան և իր ծնողը՝ օրինական ներկայացուցիչը	

ԳԼՈՒԽ 2. Ուսուցիչների վերապատրաստում և հետադարձ կապի մեխանիզմներ

Օրենքով սահմանված կարգով դպրոցին ՆԴ կարգավիճակ շնորհելուց առաջ բազմամասնագիտական և ուսուցչական անձնակազմը պետք է վերապատրաստվի: Հետազոտությանը մասնակցած հիմնականառարկայական ուսուցիչների զգալի մասը՝ 70%-ը փաստել, որ մասնակցել է ներառական կրթության թեմայով վերապատրաստումներին: Ուսուցիչների 70%-ը վերապատրաստվել է միայն մեկ անգամ: Վերապատրաստվածների 50.1%-ը չի հիշում, թե որ կազմակերպությունն է իրականացրել վերապատրաստումը, իսկ 43.2% չի հիշում անգամ, թե ինչ թեմայով էր վերապատրաստումը: Այսպիսով, վերապատրաստող կազմակերպությունները կամ չեն տրամադրում/ապահովում հետադարձ կապի մեխանիզմներ, որոնց միջոցով կարելի է գնահատել վերապատրաստումների արդյունքները և գիտելիքների կիրառությունը կամ

ուսուցիչները բավականաչափ հետաքրքրված չեն դասընթացներով և արդյունքներով: Վերապատրաստվել են նաև հետազոտությանը մասնակից բազմամասնագիտական թիմի 5 անդամներից 1-ը:

Վերապատրաստումները պետք է ունենա պրոֆիլային բնույթ՝ ուղղված տարբեր մասնագետների գիտելիքների և փորձի զարգացմանը: Անհրաժեշտ է նաև զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները: Բազմամասնագիտական թիմի անդամների և ուսուցիչների գերակշիռ մեծամասնության համոզմամբ այսօր պետական վերապատրաստող կազմակերպությունները չունեն հետադարձ կապի ինստիտուցիոնալ մեխանիզմներ:ՈՒսուցիչների գերակշիռ մեծամասնությունը վերապատրաստվել է միայն մեկ անգամ: Այս հաճախականությունը համարվում է խիստ սահմանափակ և անարդյունավետ գիտելիքի ամրապնդման և կիրառելիության բարձրացման տեսանկյունից: Վերապատրաստումներից առաջ կարիքի գնահատում որպես այպիսին չի կազմակերպվում: Բոլորի նկատմամբ գործում է նույն մոտեցումը: Գիտելիքների կարիքի գնահատումը դրա կիրառելիության բարձրացման, ինչպես նաև գիտելիք ստացողի կողմից գործընթացի նկատմամբ հետևողական վերաբերմունքի ձևավորման ամենաարդյունավետ մեթոդերից մեկն է

Քանի վերապատրաստման եք մասնակցել



Գլուխ3. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Ներառական կրթությունը շահագրգիռ կողմերի ընկալումներում ՆԿ գաղափարն իր մեջ անպայմանորեն բովանդակում է հանդուրժողականություն և այլ

համանման հասկացությունների համախմբություն, որոնց առկայությունը ոչ այնքան ցանկալի, որքան պարտադիր հիմք է, որպեսզի առանձնահատուկ պայմաններ հասկացությունը անխուսափելիորեն չվերածվի առանձնահատուկ վերաբերմունք հասկացությանը: Տվյալ հետազոտության շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել եմ հարցի շուրջ տարբեր շահագրգիռ կողմերի դիրքորոշումները:

Ծնողական համայնք, ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների շրջանում առկա է վերաբերունքի և ընկալման մի քանի խմբեր: Իբրև բացասական ընկալման հիմնավորում՝ առանձնացվում է երկու հիմնական պատճառ: Վախ և անվստահություն ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ՝ ծնողների մի մասի հավաստմամբ ԿԱՊԿՈՒ երեխաները հիմնականում անկառավարելի են, հատկապես, երբ խոսքը գնում է տարրական դասարանների մասին: Արդյունքում իրենց երեխաները ենթարկվում են վտանգի, այն պարագայում, երբ միևնույնն է այդ երեխաները ի վիճակի չէն բան սովորելու.... : Ուսումնասիրված ծնողական համայնքի մի շարք ներկայացուցիչներ ոչ միայն գաղափար չունեին, թե ինչ է իրենից ներկայացնում ներառական կրթությունը, այլև առաջին անգամ էին լսում, որ դպրոցներրը ներառական են:

- Եթե ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների շրջանում, հատկապես մարզերում, ՆԿ նկատմամբ ապատեղեկացված և կարծրատիպային դիրքորոշումները պայմանավորված են ՆԿ ծրագրի ոչ անմիջական շահառու լինելով, ապա ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները պետք է որ բավականաչափ տեղեկություն ունենան ներառական կրթության մասին: Սակայն, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները նրանք նույնպես ՆԿ-ի նկատմանմբ ապատեղեկացված են:Ծնողների որոշ խմբի համար ներառական կրթությունը նույնացվում է անհատական ուսուցման, մասնավորապես՝ երեխայի հետ նեղ մասնագետների կողմից տարվող աշխատանքների հետ: Իսկ անհատական ուսուցման նպատակը ընկալվում է որպես ցածր առաջադիմությամբ երեխաների համար լրացուցիչ օգնություն՝ ...գնահատականներն ուղղելու և մյուս դասարան տեղափոխվելու համար: Ամենատարածված կարծիքի համաձայն ներառական կրթությունը թույլ է տալիս սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին դուրս գալ միօրինակ տնային պայմաններից և օրվա մեջ մի քանի

ժամ անցկացնել այլ վայրում: Մեկ այլ կարևոր դիտարկում: Հետազոտության մասնակից գրեթե բոլոր ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար ներառական կրթությունը ունի, նախ և առաջ, վերականգնողական և ոչ թե կրթական նպատակ:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Առարկայական ուսուցիչներիմի մասը անտարբեր են ՆԿ-ի նկատմամաբ: Չունենալով գործնական համապատասխան գիտելիքներ՝ բավարար ժամանակ չեն տրամադրում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքին:
2. ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ գոյություն ունի կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք հասարակության մի հատվածի մոտ: Նման վերաբերմունքը վերարտադրվում է ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների կողմից:

3. Ծնողական համայնքի ներկայացուցիչների մեծ մասը անտեղյակ է ՆԿ-ի ն էությունից և նպատակներից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. Պետք է ավելացնեն ՆԿ վերապատրաստումների թիվը՝ շեշտադրելով գործնական գիտելիքները և հմտությունները:
2. Հատուկ ուշադրության պետք է արժանանան առարկայական ուսուցիչները: Անհրաժեշտ է մշակել կարիքի գնահատման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, որոնք պետք է պարտադիր գործեն պետական կառույցների կողմից կազմակերպվող բոլոր վերապատրաստումների համար: Սա հնարավորություն կտա ստանալ անընդհատ ընթացիկ տեղեկատվություն տրամադրվող գիտելիքի կիրառելիության վերաբերյալ, որի կծառայի նաև ՆԿ համակարգի մոնիթորինգին և գնահատմանը:
3. Անհրաժեշտ է ապահովել ՆԿ առնչվող գրականության հասանելիությունը ՆԴ-երի և մասնագետների շրջանում:
4. ԿԱՊԿՈՒ երեխաներ ծնողների հետ անհրաժեշտ է մեծ աշխատանք տանել ոչ միայն դպրոցի մակարդակով,այլ նաև պետական /սեմինարներ/ :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց- ձեռնարկ/ Ս. Թադևոսյան .- Եր.: Հեղ . հրատ., 2017.- 136էջ:

2. «Հանրապետության մասին » ՀՀօրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք /ՀՕ-200-Ն/:

3.Ներառական կրթության իրականացնող հանրակրթական դպրոցների բազմամասնագիտական թիմի վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ: Եր., 2010: 18 ժամ, 102էջ:

4. Ներառական կրթություն. ՈՒսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ.- Եր.: «Հույսի կամուրջ»ՀԿ ,2015.-200 էջ:
5. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն :2013թ.: 55էջ
*6.*ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1047-Ն որոշում
7.Ներառական կրթության ռազմավարություններ .Դասագիրք: Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: Եր. 2019թ.: 250էջ:
8. Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2005թ.,360 էջ:
9 .Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ, ՄԱԿ, Հույսի կամուրջ հկ, Երևան, 1994թ., 76 էջ:
10.Ներառական կրթության և ծնողների խորհուրդ,1996թ 28 էջ
11. https://krtutyun.wordpress.com/ներառական-կրթություն
12. http://www.edu.am
13. http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67166
14. http://assessmentofeducationalneeds.com/

ՀԱՎԵԼՎԱԾ

Դիտարկման քարտ

Սովորողի անուն, ազգանուն _____

Ուսուցիչ _____

Դասարան _____

Առարկա _____

Դիտարկման ամիս, ամսաթիվ _____

Դիտարկողի անուն, ազգանուն _____

Ուշադի՞ր է, արդյոք, դասի ժամանակ

_____

Արդյոք պատասխանո՞ւմ է ուսուցչի հարցերին (ինքնուրույն կամ օգնությամբ)

_____

_____

- ○ Ուշադիր է դասի ընթացքում, լսում է ընկերների պատասխանները
- ○ Ակտիվ է, համագործակցող, լսում և ընդունում է հրահանգները
- ○ Անվստահ է, հարցերին պատասխանելիս շփոթվում է
- ○ Չի մասնակցում դասարանական աշխատանքներին
- ○ Չի պատասխանում ուսուցչի հարցերին

Ինչպե՞ս է հաղորդակցվում ուսուցչի և ընկերների հետ

_____

_____

Շփվու՞մ է, արդյոք, համադասարանցիների հետ դասամիջոցին, ի՞նչ բնույթ ունեն նրա գործողությունները:

_____

_____

- ○ Ակտիվ է, նախաձեռնող, հրամայում, կազմակերպում, ենթարկում է իրեն
- ○ Ակտիվ է՝ ելնելով իրավիճակից
- ○ Պասիվ հետևում է իր շուրջը կատարվող դեպքերին
- ○ Անտարբեր է միջավայրի հանդեպ, խաղում է մենակ
- ○ Ինքնամփոփ է, չի հաղորդակցվում:

Դասաժամին և դասամիջոցին սովորողին ուսումնասիրել 10 րոպե, նկարագրել այն ոլորտները, որտեղ սովորողը դժվարանում կամ մշտական օգնության կարիք է զգում:

_____

_____

Լրացնող՝ _____

անուն, ազգանուն, պաշտոն

Լրացման ամսաթիվ «____»_____21 թ.